ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Շուշանիկ Ներսիսյանի՝ Բելառուսի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Շուշանիկ Ներսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Մինսկ, Բելառուսի Հանրապետություն, 2018 թվականի սեպտեմբերի 20-22-ը

4. Հրավիրող կողմը՝

Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող Վ.Ն. Օրլովսկի:

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 28-րդ նիստին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 28-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 27 որոշումներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության ղեկավար Վ.Ի Բուլավինի և Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի նախագահ Յու. Սենկոյի հետ, քննարկվել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 28-րդ նիստի ընթացքում ստորագրվել են թվով 27 որոշումներ մասնավորապես ԵՏՄ մաքսային օրենսգրքի համաձայն անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծման ժամկետը դադարեցնելու և վերսկսելու ժամանակ ԵՏՄ անդամ պետությունների մաքսային մարմինների աշխատանքի փորձի վերաբերյալ, այն ապրանքների ցանկի հաստատման վերաբերյալ, որոնց նկատմամբ իրականացվում է մաքսային արժեքի հսկողություն, երկուղի համակարգի կիրառման ժամանակ անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրման վերաբերյալ, ԵՏՄ անդամ պետությունների օրենսդրության խախտումը բացառելու նպատակով մեկնման փաստի հաստատմանն և մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի ավարտին ուղղված միջոցների մշակման վերաբերյալ, լիազորված տնտեսական օպերատորների կողմից առաջնահերթության կարգով մաքսային գործառնությունների կատարման վերաբերյալ և այլն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Որոշում է կայացվել ԵՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի հաջորդ՝ 29-րդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Հարգանքով՝

Մ/Ծ ԳՆԴԱՊԵՏ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 9/25/2018 15:06:07 GMT+4

Signed by: NERSISYAN SHUSHANIK 5308860769 ՇՈՒՇԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

25.09.2018թ.